ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀՄԱՅԵԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ԳՆԴԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՂ

« Բազմութիւն փախստէիցն Հայոց , նախարարք և սեպուհք , ոստանիկք և ըռամիկք գիմեալ 'ի յերկիրն Տայոց , ժողովէին առ ՀՄԱՅԵԱԿ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ , որ էր յամեալ յաշխարհին Յունաց խնդրել զօրս 'ի Թագաւորէն : . . . Եւ ոչ ժամանեալ 'ի գործ ժամու պատերազմին (Վարդանանց) , առ վայր մի առ լեռամբն որ կոչի Պարխար՝ դադարեցին . . . անդ զկատարելութեան պսակն ընդունէր երանելի սեպուհն ՀՄԱՅԵԱԿ զոր փափաքանօք և բազում ցանկութեամբ խնդրէր ժամանել զկնի սուրբ Եղբօրն իւրոյ , և փութապէս լսելի լինէր . զի հայեցեալ Աստուծոյ 'ի փափաք Առնն՝ կատարէր զհայցուածն , և պսակէր զՍուրբն » :

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Աստանօր այն ինչ 'ի հայրենիսն մտանալ՝ խօսի առոյգ Սեպուհն առ Հայաստան և առ նորա որդիս :

Համառօտեցան բա՛ անձկայրեացք պանդխտութեան . . .
Ո՛հ Հայաստան . . .

Ողջո՛յն հայրենիք , ողջո՛յն օդոց քոց քաղցրութեան .
Ողջո՛յն լերանց , գետոց ողջոյն եւ քո սուրբ հողոյն
Հայաստա՛ն , ողջո՛յն .

Ո՛ւր յուխից վիժակ՝ տոչորեալ շուրթըն ծարաւի ,
Ո՛ւր 'ի գիրգ բազուկ՝ անձկակարօտ հարսին փեսայ ,
Ո՛ւր 'ի զինուց շահ՝ նահատակն 'ի դաշտ արշաւի ,
Թեւաբերելով առ քեզ սրտիւք գամ 'ի բացեայ
Հայաստան , ըղձիւք նախընծայ .

Զի քոյդ արդ ոչ լոկ մարմնաւոր յիս սիրելութիւն .
Այլ զի նախնեաց հանգըստարան եւ իմ խանձարուրք ,
Այլ զի յերկնից պատուիս վայրէջս արդ վըսեմագոյն ,
Զի արութիւն ձեռն 'ի ձեռին ընդ սրբութեան շուք
Ինձ հրաւէր ազգէն համազոյգ .

Հայրենեաց իմ որդիք , ընդ իս զի՞ պիշ հայիցիք ,
Զի՞ տխրագին կախին ձեր յօնք բեկելով սրտի .
Ինձ եթէ ոչ ընկերիցեն յոյն սուր , տէգ եւ ձիք ,
ԶԱստուած ձեզ առաքերեմ պարիսպ քաջալերք մարտի ,
Ձեզ այլ զի՞նչ երկրաւոր պէտ .

Թոռ բիւզանդեան ոչ խիտ յերկին դրօշք վառ փողփողէն,
Թոռ ոչ Մասիք յոյն ծեքանաց արձագանգ կըրկնեն,
Ո՞չ կորովասիրտ Հայք արշաւեն 'ի սուր եւ զէն,
Ո՞չ հայկեան շեփոր 'ի դաշտ մարտի հուր փորոտայցեն
Սասանեանց սեւագընդին դէմ։

Նչէք քաջազգի հարց իմ ծընունդք, դուոյթ առէք մարտի,
Մի դաշտք ձեր սուրբ յարիւն վարձկան երբէք արատի,
Դօս իսկ յերակունս մի եւեթ շիթ թէ պըղպըջէր՝
Հայրենեաց դա, յոյր 'ի ծոցոյ ընկալեալ է մեր,
Ելմին պահանջիմք նըւէր։

Մամիկոնեան տեսէք ծածանի վառ խաչազէն,
Մուշեղեանց եւ Վասակայ սիւք ըզնովաւ վազեն.
Դա այդ է զոր 'ի Ձիրաւ տեսէք ծալ 'ի ծալ,
Յելից դա ցըմուտս Մզուանք 'ի Հոնս յաղթողափայլ,
ՅԱւարայր 'ի վարդ պըսակեալ։

Մրիք, ընդ մեզ թեւակցեցին յանմահից խորան
Դրիգոր, Ներսէս, եւ պըսակազգեստ Կարմիր Վարդան.
Կարապետեն 'ի հանդիպոյ զահ մեզ վերամարտ
Կապել բըլթել զպարսիկ սուսեր եւ զնետ, սաղաւարտ
Կորակոր անձանց դատապարտ։

Օ՜ն հանգանակեմք զոր յԱւարայր քաջաց սուսեր,
Կըրկին 'ի դա կարշնեղ բազուկք շընչիցեն ձեր,
Մի որ զնոքօք ժանգահարի պարսիկ արիւն
Մայլ մերձ ընդ մերձ հապա մրխեսցին յաւիշկ 'ի նոյն
Յոսկերաց վատաց սարսափիւն։

Մաչեսցէ շիկնեալ կըրակ յերեսաց Խաչին
Ի խաւար մածեալ յարեանց հեղեղ երկըրպագչին.
Ո՜ Հայկազունք, աւարայրեան խնդրեն զոհ ոգիք....
Նրդուեալ թէ ոչ 'ի մեր սուսեր մաշեալ, ա՛րք պարսիկք,
Պաշտելիդ 'ի հուր ծախեսջիք։

Հապա, հաւատոց ըզհուր յաջում, ահեկաւն ըզսուր,
Մնջք գեր շողացին յատրուշանացն 'ի բաց տրխուր.
Նա մինչ սուսերք կայտառեն 'ի գլուխս 'ի սիրտ թափանցանց՝
Մեք 'ի վատաց ճրչել բընչել յուսաբեկ կաղկանձ
Պարզեսցուք ըզձայն օրհնութեանց։

Պընդեսցին, ո՛ քաջք իմ, ձեր լարք հաստոյր աղեղանց,
Մահ սեաւ ըզթեան յերեքսայրի փըքին ձեր կապեաց.
Ո՛չ նայիք, ձեզ մատնանիշ արիք մեր յերկնից,
Հարէք պինդ. ուր մեզ՝ այդ նըշանակ մոխրապաշտից.
Թուիցեն տեգք, դռոյթ տարափ նետից։

Մի՛ սուսերք ձեր, մըք զօրութեան, հանգչին 'ի պատեան,
Մի՛ շանթաձիգ ձեր կապարճից կարկամի բերան.
Մինչ չեւ լուսի վրիժուց թափեալ հուր զայրագին
Դիւապաշտից շեշտ 'ի կառափ.— թէ գնամք իսկ յերկին,
Բայց եւ անդ ոխք մեր մի՛ շիջցին։

Զերդ Մասեաց ըստուերք յերեկորին յերկարեալ պահ
Նըսեմ խոնարհի արփինարքու Մասնեանց ջահ.
Անյիշատակ փառքն անցցեն իբր յեզերց՝ ջուրք անդարձ.
Եւ ձեր ճաճանչից յաղթեալ գլխաւորըն բընաբարձ՝
Զբաղդիդ մէտ տարցեն երկնամբարձ։

Ո՛ն իմ ձերմակ, տար ուր Կատիչք ուր Մատեան է գունդ....
Ո՛ քաջք, 'ի գիւտ սրանամ փառաց երկնաւոր ծընունդ.
Ուր մահունք, մըրիկ, ապշոպք՝ զիս անդ խնդրեցէք.
Իսկ երբ ըզշողին սուսերիս ոչ տեսանիցէք,
Յերկինս եմ, զիս անդ գիտացէք։

Այսպէս ես 'ի վըէժ հաւատոյ սուրբ եւ հայրենեան
Զքոյդ իսկ խառնեալ՝ զհետ փութացայց, քաջաց քա՛ջ Վարդան.
Հըմայեակն եմ ես հարազատ քեզ յաւերժական,
Մարմնով յօղուածոյ՝ սակայն հոգւով մի քեւ համայն.
Ներիցես զ'ի քէն զիրկ գընամ։

Այօրեայ փառաց քեզ համաշունչ զուգահաղորդ՝
Մի՛ յանանցն աղէ անկցի կըրճիմ ընդ մեզ միջնորդ.
Ի ծնունդ մեզ մի արգանդ, լիցի նոյն մահուն ուղի.
ՅԱրտազ, Պարխար, տուր զոր հաճիս երաշխի տեղի,
Քեզ մընամ անդ հանդիպելի։

Հ. Խ. Դ.